Սեռական և վերարտադրողական առողջության հիմնախնդիրները քրեակատարողական հիմնարկում.

ի՞նչ են պատմում ազատազրկված կանայք

«Աբովյան» քրեակատարողական հիմնարկը կառուցվել է 1958 թվականին, շահագործման հանձնվել՝ 1958-1973 թվականներին:

Ի սկզբանե հիմնարկը նախատեսված է եղել միայն անչափահասների համար: 1991 թվականից սկսած այնտեղ պահվում են նաև կալանավորված և ազատազրկման դատապարտված կանայք:

Կալանավորված կանանց համար խցային պայմաններ են ապահովվում: Դատապարտյալի կարգավիճակ ստանալուց հետո որոշվում են նրանց անվտանգության գոտին և պատժի կրման պայմանները:

Բարձր անվտանգության գոտու մեղմ ու խիստ և միջին անվտանգության գոտու խիստ պայմաններում պատիժ կրող կանանց համար նույնպես խցային պայմաններ են ապահովվում: Իսկ միջին անվտանգության գոտու մեղմ և ցածր անվտանգության գոտու խիստ պայմաններում պատիժ կրող կանայք կացարանային պայմաններում են պահվում:

Խցային և կացարանային պայմանների համար առանձնացված մասնաշենքներ կան՝ մեկուսարան և կանանց տեղամաս:

Ո՞վքեր են այդ կանայք, ի՞նչ խնդիրներ ունեն նրանք, հիմնարկի պայմաններն ինչպե՞ս են ազդում նրանց առողջության վրա, ինչպե՞ս է կազմակեպվում նրանց բուժումը, խնամքը և հիգիենան, ո՞վ է հոգ տանում նրանց բարօրության մասին...

Այս հարցերի պատասխանները փնտրել ենք հենց այնտեղ՝ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում:

Նյութը պատրաստել են Անահիտ Հարությունյանը (լրագրող) և Նարե Հովհաննիսյանը (իրավաբան):

Այդ նպատակով 2023 թվականի հոկտեմբերի 17-ին այցելություն է կատարվել «Աբովյան» քրեակատարողական հիմնարկ, նույն թվականի նոյեմբերի 17-ին՝ Քրեակատարողական ծառայություն, հարցազրույցներ են անցկացվել ինչպես ազատազրկված կանանց, այնպես էլ համակարգի աշխատակիցների հետ:

Ազատազրկված կանանց ձայնը և անունները փոխվել են՝ պահպանելու համար անձնական տվյալների գաղտնիությունը:

Աղբյուրը՝

https://prisoninitiatives.am/articles/30155/

Նյութը պատրաստվել է Կանանց ռեսուրսային կենտրոնի «Կանանց իրավունքների դասընթաց» ծրագրի շրջանակներում՝ Շվեդիայի միջազգային զարգացման համագործակցության գործակալության (SIDA) աջակցությամբ:

Բովանդակության համար պատասխանատվություն կրում են բացառապես հեղինակները: SIDA-ն և ԿՌԿ-ն կարող են չկիսել դրանում արտահայտված տեսակետներն ու մեկնաբանությունները:



Կնոջ համար դժվար է քրեակատարողական հիմնարկում

Տիկին Գայանեին հանդիպեցինք կանանց տեղամասում: Երկու տարի է, ինչ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում է: Դատապարտյալ է, բայց նաև աշխատում է: Պատասխանատու է լոգարանի, լվացքատան և մարզասրահի մաքրության համար: Նախկինում աշխատել է բուժհաստատությունում և փորձում է ամեն ինչ անել, որպեսզի տարածքը և լվացքի մեքենան հնարավորինս ախտահանված լինեն:

Բուժանձնակազմից և հիմնարկի աշխատակիցներից դժգոհություններ չունի: Ասում է՝ շատ հոգատար են, ամեն ինչ անում են, որպեսզի չզգան, թե իրենք «որտեղ» են: Օրինակ, հիգիենայի պարագաներն այն քանակով են տալիս, որ մեկ ամիս բավարարում են:

Խոսելով խնդիրների մասին՝ առանձնացրեց դեղերի սակավությունը, բուժքույրերի ծանրաբեռնվածությունը և զրույցը շարունակեց արցունքոտված աչքերով՝ պարզապես կանանց համար շատ դժվար է հիմնարկի պայմաններին հարմարվելը, ընտանիքից հեռու լինելը:

Հիմնական խնդիրները կապված են նյարդային համակարգի հետ: Գրեթե բոլորն ունեն նևրոզ, բողոքներ սրտից, ոտքերի և մեջքի ցավից, ինչը պատահական չէ: Կանանց տեղամասի գետինը բետոնից է, ամեն տեղ խոնավություն է նկատվում: Սակայն ինչպես առօրյա կյանքում, այնպես էլ հիմնարկում կանայք ծայրահեղ դեպքում են դիմում բժշկի:

Եթե ազատազրկված ծնողը համաձայն է, իր մանկահասակ երեխայի խնամքը կարող են ստանձնել իր ազգականները կամ համապատասխան հաստատությունները:

Մեր այցի ժամանակ տեղեկացանք, որ ազատազրկված ծնողը կարող է երեխային մինչև 6 տարեկանը պահել նաև իր մոտ:

Թերևս դա է պատճառը, որ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում հանդիպեցինք կալանավորված և պատիժ կրող մայրերի՝ իրենց երեխաների հետ:

Հղի կանանց և երեխամայրերի համար ոչ մի պայման ապահովված չէ հիմնարկում

Կանանց տեղամասի միջանցքում տեսանք Աննային՝ երեխային գրկած: Հղի էր, երբ դատապարտել են ազատազրկման: Տղային, որ իր երկրորդ երեխան է, դատապարտյալ կինը ճաղերի ներսում է սպասել և ունեցել:

Ասում է՝ հոգեբանորեն դժվար է նորածին երեխային քրեակատարողական հիմնարկ բերելը: Հիշում է՝ մյուս հղի կանայք իրենց ամուսինների հետ են բժշկի այցելել, ինքը՝ համազգեստով տղամարդկանց: Մյուսներին իրենց ընտանիքի անդամներն են դիմավորել ծննդատանը, իրեն՝ ուղեկցող գումարտակի հսկիչները, որոնց հետ նստել է մեքենան և եկել հիմնարկ, որտեղ հղի կանանց և երեխամայրերի համար ոչ մի պայման ապահովված չէ:

Հերթականությամբ թվարկում է խնդիրները: Հղի կնոջ համար դժվար է ասիական տիպի զուգարանակոնքով սանհանգույցից օգտվելը: Կացարան-սենյակում ոչ լոգարան կա, ոչ էլ սանհանգույց: Մինչ սրբիչի մեջ փաթաթած, ցուրտ միջանցքով կացարանից ընդհանուր լոգարան է տանում-բերում, նորածին երեխան մրսում է: Երեխային չի կարող քնած կամ մենակ թողնել սենյակում և ինքը գնալ լոգարան՝ լողանալու կամ լվացք անելու:

Բացատրեց, որ իր հագուստը լվացքի մեքենայով են լվանում, իսկ երեխայի շորերն ու անկողնային պարագաներն ինքն է լվանում՝ ձեռքով: Երեխաների համար առանձին լվացքի մեքենա չկա: Հետևաբար չի կարող նորածին երեխայի շորերը 15 կնոջ հագուստի հետ խառնել, ընդհանուր լվացքի մեքենայով լվանալ: Երեխայի հիգիենայի հետ կապված մտահոգություններ ունի: Եվ հենց այստեղ են խնդիրներ առաջացել.

«Երեխայիս կեսարյան հատումով եմ ունեցել: Կարերը վրաս՝ շորերը լվանում էի, դրսում փռում, որ չորանան: Հետևանքը եղավ այն, որ տարատեսակ բորբոքումներ ու խնդիրներ ունեցա»:

Իր թույլտվությամբ այցելեցինք կացարան-սենյակը, որտեղ «ապրում է» երեխայի հետ: Սենյակը կանանց տեղամասի երկրորդ հարկում է: Գետինը բետոնից է՝ ծածկված լինոլիումով: Պատերը թեև ներկված են, բայց տեղ-տեղ խոնավության հետքեր են նկատվում:

Սենյակում առաջին անհրաժեշտության իրեր են, հին մահճակալ՝ որի վրա ինքն է քնում, մանկասայլակ՝ որի մեջ երեխան է քնում, անկողնային պարագաներ՝ որոնք ընտանիքն է ուղարկել, կողապահարան, պահարան, սեղան, աթոռ, էլեկտրական սալիկ... Ասաց՝ հիմնարկի պետը թույլատրել է նախքան ջեռուցումը միացնելն էլեկտրական սալիկ օգտագործել: Ինքն աշխատում է սենյակից դուրս չգա, որպեսզի չհիվանդանա և երեխային վարակի:

Սակայն մտահոգությունը միայն երեխայի հիվանդանալը չէ: Տղան արդեն հինգ ամսական է, սկսում է շրջապատը ճանաչել, բայց հիմնարկում ի՞նչ պիտի ցույց տա, պատերը՞... Երեխայի համար զբաղմունքի ոչ մի միջոց չկա: Երբ արդեն սկսի քայլել, ընտանիքը քայլակ կբերի, բայց ամբողջ շենքի գետինը բետոնից է...



Աննայի կացարան-սենյակը

Նարինեի հետ զրուցեցինք խցում: Երեք տարի է, ինչ կալանավորված է: Մեծ տղան 7 տարեկան է, միջնեկ աղջիկը՝ 4, որոնց իր մայրն է խնամում: Հիմնարկը հնարավորություն է տալիս ամսվա մեջ 2 անգամ մինչև 3 ժամ տևողությամբ կարճատև տեսակցություն ունենալ երեխաների հետ: Կարոտով հանդիպում է ու կարոտով բաժանվում՝ սպասելով հաջորդ հանդիպմանը:

Օրենքով սահմանված է, որ ամուսինները և ընտանիքի մյուս անդամները կարող են 2 ամսվա մեջ 1 անգամ երկարատև տեսակցության գալ քրեակատարողական հիմնարկ: Երկարատև տեսակցության ժամանակ Նարինեն ամուսնու հետ է հանդիպում: Հենց քրեակատարողական հիմնարկում է ամուսնացել: Ամուսինը նույնպես դատապարտյալ է և այլ հիմնարկում է պատիժ կրում: Անազատության մեջ ստեղծված ընտանիքը 2 ամիս առաջ է համալրվել: Նրանց որդին հիմնարկում է լույս աշխարհ եկել:

Ասաց՝ երկարատև տեսակցության համար նախատեսված սենյակն ապահովված է անհրաժեշտ իրերով, ունի խոհանոց, լոգարան, տաք ջուր: Սակայն իրեն մտահոգում են ոչ թե սենյակի պայմանները, այլ տեսակցության տևողությունը: Ձեռքին օրացույցն է, որի վրա նշում է ամուսնու հետ հանդիպման օրերը: Յուրաքանչյուր խաչաձև նշված ամսաթիվ ևս մեկ օրով մոտեցնում է հաջորդ հանդիպումը.

«Այն, որ երեք օր իրար հետ ենք, ամեն ինչ արժե: Ուրիշ ոչ մի բանի ուշադրություն չեմ դարձնում: Միայն թե երեք օրը քիչ է: Գոնե հինգ օր լիներ»:

Կեսարյան հատումով է ունեցել երեխային: Չորս օր պառկել է քաղաքացիական հիվանդանոցում, այնուհետև տեղափոխվել հիմնարկ: Հետծննդաբերական բարդություններ չեն եղել: Հիմնարկի բուժմասի բուժքույրն օրական 2 անգամ այցելել է, կարերը մշակել: Հղիության ինն ամիսներին խցակցի հետ «ապրել է» մեկուսարանի մասնաշենքում: Այցի պահին Նարինեն բալիկի հետ երեխամայրերի համար նախատեսված սենյակ-խցում էր, որը վերջերս է վերանորոգվել և տեղակայված է մեկուսարանից դուրս մեկ այլ մասնաշենքում: Ներկառուցված լոգարան, սանհանգույց, հեռուստացույց, պահարան, սեղան, աթոռներ նաև մեկուսարանի խցում կային: Այնտեղ ևս երեխային զբոսանքի էր հանում: Նոր խցում առավելությունը մշտական տաք ջուրն է, որով ապահովված է լոգարանը: Սակայն Նարինեն պայմաններին չի համակերպվում.

«Մենակ եմ ու այս մենակության մեջ խելագարվում եմ: Ինձ թվում է՝ սկսում եմ ինքս ինձ հետ խոսել: Հղիության ինն ամիսների ընթացքում խցակից ընկերուհիս է օգնել, իսկ այստեղ մենակ եմ: Երբ մտնում եմ լոգարան կամ լվացք եմ անում, երեխայիս խնամող չկա: Լինում է՝ չեմ հասցնում հաց ուտել: Եթե բախտս բերում է, երեխան լողանալուց հետո քնում է, շորերը լվանում եմ: Եթե չի քնում, այդպես կեղտոտ էլ մնում են: Ավելի լավ է ինձ այստեղ չբերեին, պայմանները վատ լինեին, բայց մեկը լիներ, ում հետ կկարողանայի խոսել, ով կօգներ ինձ»:

Հիմնարկում շրջելուց հետո մենք էլ համոզվեցինք, որ այն ճարտարապետական կառուցվածքի և շենքային պայմանների տեսանկյունից հարմարեցված չէ ազատազրկված կանանց ներհատուկ կարիքներին: Հատկապես մեկուսարանի մասնաշենքը ոչ բարվոք վիճակում էր: Խոնավության պատճառով միջանցքների, խցերի և դրանց սանհանգույցների պատերի ու առաստաղների արտաքին շերտը քայքայված էր, ծեփը թափված կամ տեղ-տեղ ծածկված բորբոսով: Մասնաշենքի բոլոր հատվածներում նկատեցինք վերանորոգում կատարելու անհրաժեշտություն: Թեև մեկուսարանի մասնաշենքի համեմատությամբ կանանց տեղամասի մասնաշենքը բարվոք վիճակում էր, այնուամենայնիվ, վերանորոգման աշխատանքներ կատարելու անհրաժեշտություն նկատեցինք հատկապես լոգարաններում և սանհանգույցներում:

Շենքային պայմաններից բացի, կանանց առողջության վրա ոչ համաչափ են ազդում նաև կանոնավոր տաք ջրի, անձնական հիգիենայի ու խնամքի պարագաների և զբոսանքի սուղ հնարավորությունը, մաքուր օդի և շարժունակության պակասը: Այս առումով առավել անբարենպաստ վիճակում են հղի և իրենց մոտ մանկահասակ երեխաներ ունեցող կանայք: Նկատեցինք, որ կացարանում և խցերում բացակայում են մշտական տաք ջուրը, հարմարեցված լոգարանը և սանհանգույցը, մանկական օրորոցը կամ մահճակալը: Տեղեկացանք, որ կանանց ամսվա մեջ տասը հատ կանացի միջադիր է տրամադրվում, մանկահասակ երեխաներին՝ օրվա մեջ չորս հատ մանկական տակդիր, ամսվա մեջ երեք հատ մանկական հիգիենիկ խոնավ անձեռոցիկ:

Սակայն հակաբեղմավորիչները և հղիության թեստերը ներառված չեն կանանց տրամադրվող անձնական հիգիենայի պարագաների մեջ: Դրանք կամ տեսակցության եկած անձինք են բերում, կամ հիմնարկի աշխատակիցներն են իրենց անձնական միջոցների հաշվին ձեռք բերում և տալիս կանանց:

Նոր վերանորոգվող խցերը

Քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի Սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժնի պետ Ծովինար Թադևոսյանը մեզ հետ զրույցում նշեց, որ քրեակատարողական համակարգում տեղյակ են այդ խնդիրների մասին:

Թերևս դա է պատճառը, որ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում շինարարական և վերանորոգման աշխատանքներ են ընթանում, ինչի արդյունքում նախատեսվում է հնարավորինս բարելավել բոլոր, այդ թվում՝ առաձնահատուկ կարիք և խնամք ունեցող կանանց պայմանները.

«Այս ուղղությամբ աշխատանքները մեկնարկել ենք 2022 թվականից: Մեկուսարանի մասնաշենքում պահվող այն կանանց համար, ովքեր հղի են կամ իրենց մոտ մանկահասակ երեխա ունեն, առանձնացված խցային պայմաններ ենք ստեղծել: Մեկ խուց արդեն իսկ վերանորոգվել է, որտեղ հիմա իր երեխայի հետ բնակվում է 1 կալանավորված կին: Ընթացքի մեջ են նմանատիպ 2 խցի վերանորոգման աշխատանքները: Այդտեղ նաև երեխաների համար կանաչապատ այգու և խաղահրապարակի հնարավորություն կա:

Առանձնացված պայմանների նպատակը նաև այն է, որ հնարավորինս նվազեցվի երեխայի շփումը մյուս կալանավորված և դատապարտյալ կանանց հետ: Հիմնարկում ներկայումս 3 մայր իրենց մոտ մանկահասակ երեխա ունեն: Երկու հղի կին կա: Մենք պայմանները ստեղծում ենք, սակայն առանձնացված պայմաններում բնակվելու վերջնական որոշումը կինն է կայացնում: Նա զրկված է ազատությունից, այլ ոչ թե ընտրություն կատարելու հնարավորությունից»:

Եթե կալանավորված, բարձր անվտանգության գոտու մեղմ ու խիստ պայմաններում և միջին անվտանգության գոտու խիստ պայմաններում պատիժ կրող հղի կանանց և երեխամայրերի ներհատուկ կարիքներին համապատասխան 1 սենյակ-խուց վերանորոգվել է և ևս 2-ը վերանորոգվում են, ապա միջին անվտանգության գոտու մեղմ և ցածր անվտանգության գոտու խիստ պայմաններում պատիժ կրող հղի կանանց և երեխամայրերի համար առանձնացված պայմաններ նախատեսված չեն: Նրանք պահվում են նույն պայմաններում, ինչ կանանց տեղամասի մյուս կանայք: Մինչդեռ Նարինեն հենց այդ առանձնացված պայմաններին չի կարողանում հարմարվել: Մեզ հետ զրույցում «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի հոգեբան Շուշան Մաթևոսյանը հետևյալ կերպ պարզաբանեց խնդիրը.

«Նարինեն ապրում է այն սենյակում, որը նոր է վերանորոգվել և նախատեսված է երեխամայրերի համար: Խցում մշտական տաք ջուր կա, ինչը երկար տարիներ չկար: Թվում է՝ լավ պայման ենք ստեղծել, բայց այլ խնդիրներ են առաջացել՝ մեկուսացում, խցակից-ընկերների և շփման բացակայություն:

Կինը մարդկային շփման կարիք ունի: Բացի այդ, դժվարանում է երեխայի խնամքով մենակ զբաղվել: Լոգարանում տաք ջուր կա, սակայն կինն ասում է՝ երեխային պահող չկա, որ լողանա»:



Նարինեն երեխային կրծքով է կերակրում: Բայց անգամ դա չի խանգարել, որպեսզի հիմնարկի ղեկավարությանը տեղեկացնի, որ իր խնդիրը լուծելու համար պատրաստ է հացադուլ հայտարարելու մասին դիմում ներկայացնել: Հիմնարկի ղեկավարությունը շատ արագ է արձագանքել: Մեր այցից օրեր անց տեղեկացանք, որ Նարինեն այլևս մենակ չէ: Կալանավորված կանացից մեկը, ով հղի է, մեկուսարանի մասնաշենքից տեղափոխվել է իր խուց:

Շուշան Մաթևոսյանը պատմեց, որ ազատազրկված կանանց հետ աշխատանքի ընթացքում տարբեր հակասական իրավիճակների է հանդիպում: Օրինակ, որոշ երեխամայրեր անգամ քրեակատարողական հիմնարկից շատ հոգատար են վերաբերվում իրենց երեխաների դաստիարակությանը, դպրոց հաճախելիությանը: Սակայն կան երեխամայրեր, ովքեր ծնողավարության հմտությունների պակաս ունեն, ինչի պատճառով դժվարանում են երեխաների հիգիենան և խնամքը կազմակերպելու հարցում.

«Կանայք նախածննդաբերական շրջանում վախի, տագնապի զգացողություններ ունենում են, անգամ եթե ծնվում է իրենց երկրորդ, երրորդ կամ չորրորդ երեխան: Այդ ժամանակ ընդունելություն եմ կատարում, փորձում եմ ոգևորել, որ դրական բանի համար է այդ ամեն ինչը, նոր կյանք են տալիս: Հետծննդաբերական շրջանում ավելի շատ ծանրաբեռնված են լինում երեխայի խնամքով:

Սակայն շատերը տեղյակ չեն հղիության փուլերի և դրա առանձնահատկությունների, անգամ երեխայի խնամքի մասին: Կանացից մեկը հղիության ժամանակ տագնապի ու վախի զգացողություններ ուներ: Չէր պատկերացնում, թե ինչպես պետք է խնամի երեխային, ինչն իր բացատրությունն ունի: Իր մյուս երեխայի խնամքով ոչ թե ինքը, այլ մայրը, դայակը, ընտանիքի մյուս անդամներն են զբաղվել»:

Այն, որ ազատազրկված կանայք քրեակատարողական հիմնարկի պայմաններից չեն խուսափում և երեխա են ունենում, վկայում է նրանց՝ մայրանալու մեծ ցանկության մասին: Միգուցե նրանք այդպիսով փորձում են ազատազրկման ընթացքում իրենց առօրյան փոխել, ազատվել տանջող մտքերից ու օրը լցնել երեխայի խնամքով, հոգածությամբ: Սակայն կանանց հետ աշխատող հոգեբանի մտահոգություններն այս հարցում հակասական են.

«Ընտանիքում, այլ ոչ թե քրեակատարողական հիմնարկում մեծանալը բխում է երեխայի լավագույն շահից: Բայց, մյուս կողմից, որպես հոգեբան դեմ եմ, որ երեխան մորից անջատվի, քանի որ դա կրկնակի սթրես է ոչ միայն ծնողի, այլև երեխայի համար: Թեև այն, որ կինն այստեղ է, նրա հղիությունը, հղիության ողջ ընթացքը, ծննդաբերությունը, հետծննդաբերական շրջանը, երեխային պահելն ու երեխայից բաժանվելը, հիմնարկի պայմաններն արդեն իսկ սթրեսային են: Ու ի՞նչ ենք ունենում՝ կանայք, ովքեր անընդհատ սթրեսի մեջ են...»:

Մեր այցի ժամանակ տեղեկացանք, որ քրեակատարողական հիմնարկում գործում է Սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժին, որն ազատազրկված կանանց հետ համապատասխան մասնագիտական աշխատանքներ է կատարում ինչպես խմբային, այնպես էլ անհատական տարբերակով: Հղի կանանց և երեխամայրերի հետ աշխատանքը նույնպես կարևորվում է բաժնի մասնագետների կողմից: Նրանք ծնողի հետ նախապատրաստական աշխատանքներ են կատարում՝ ուղղված երեխայի խնամքի կազմակերպմանը, դաստիարակությանը: Սակայն մանկահասակ երեխաներին մասնագիտական աջակցություն չի տրամադրվում: Ծովինար Թադևոսյանը համակարծիք է, որ դա խնդրահարույց է, սակայն բացատրեց, որ քրեակատարողական համակարգում համապատասխան մասնագետներ չկան.

«Մանկահասակ երեխաների տարիքային զարգացման փուլերն առանձնահատուկ են: Մեծահասակի հետ աշխատող հոգեբանը, ով չունի համապատասխան գիտելիքներ և փորձառություն, չի կարող նրանց հետ աշխատել: Մայրերին ենք սովորեցնում, թե երեխաների հետ ինչպես պետք է իրականացնեն այդ աշխատանքները: Փորձում ենք երեխայի ժամանցն ապահովել տարիքին համապատասխան խաղերի միջոցով»:

Այս հարցում օգնում է նաև Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոնը, որը պատասխանատու է ազատազրկված անձանց կրթության կազմակերպման համար: Կենտրոնը տարիներ առաջ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում ծնողական ակումբ է կազմակերպել, որի շրջանակներում մասնակից կանանց ծնողավարության հմտությունների մասին ձեռնարկներ են տրամադրվել: Ներկայումս կենտրոնը ծնողավարության թեման ներառել է «Ընտանեկան բռնության կանխարգելում, հույզերի կառավարում» դասընթացի մեջ, որին ամեն տարի 10-ից ավել կին է մասնակցում: Դասընթացը թեմաներ է ներառում նաև արդյունավետ հաղորդակցության, ինքնաճանաչման, սթրեսի և զայրույթի կառավարման, միջանձնային կոլֆիլկտների հաղթահարման մասին:

Սակայն ազատազրկված կանանց տեղեկատվություն կամ խորհրդատվություն չի տրամադրվում այնպիսի թեմաների շուրջ, ինչպիսիք են առողջ ապրելակերպը, սեռավարակների կանխարգելումը և բուժումը, առողջ սեռական հարաբերությունները: Բացառություն են կազմում ՄԻԱՎ-ի, դրա փոխանցման ուղիների և բուժման վերաբերյալ հասարակական կազմակերպությունների կողմից անցկացված իրազեկման դասընթացները, որոնք, սակայն, պարբերական բնույթ չեն կրում: Թերևս ցածր իրազեկվածությունն է պատճառը, որ ՄԻԱՎ-դրական կարգավիճակ ունեցող կանանց նկատմամբ խտրական վերաբերմունք է դրսևորվում: Կանանց տեղամասում իմացանք, որ նրանք առանձին կացարանում են պահվում, չեն օգտվում ընդհանուր լվացքի մեքենայից, մյուս կանայք խուսափում են նրանց հետ շփվելուց:

Այցի ժամանակ նկատեցինք, որ հիմնարկի աշխատակիցների մեծ մասը տղամարդիկ են:

Հարց է առաջանում՝ մեծամասամբ տղամարդկանցից բաղկացած անձնակազմը կարո՞ղ է զգայուն մոտեցում ցուցաբերել ազատազրկված կանանց նկատմամբ: Արդյո՞ք նրանց համար համապատասխան դասընթացներ են կազմակերպվում: Որոշում կայացնող պաշտոնյաները տեղեկացվա՞ծ են այս խնդիրների մասին:

Ճիշտ է, ազատազրկված կանանց վիճակի բարելավմանը, նրանց սեռական և վերարտադրողական առողջության և իրավունքների պաշտպանությանը հասնելը երկարատև ու համակարգային փոփոխություններ ակնկալող գործընթաց է:

Բայց մենք կարծում ենք, որ այն պետք է սկսել որոշում կայացնող պաշտոնյաների և հիմնարկի աշխատակիցների զգայունության և իրազեկվածության բարձրացումից: